

հրէաներուն դէմ եւ ահագին աշխատանք թափեցին լեհ ժողովուրդը զրգոելու անոնց դէմ: Շատ մը կրօնական ամբիոններ կը ծառայէին միայն հակասեմական փրօփականդի, եւ ժողովուրդը բացէ ի բաց կը հրաւիրուէր հրէաներու հարստութիւնը կողոպտելու եւ դանոնք կոտորելու:

Շմիէյնիքի Հէթմանի ժամանակ մանաւանդ ահագին խռմբերով աւաղակներ տալիներ շարունակ անպատիժ կերպով ասպատակեցին Լեհաստանն ու Ուկրայինան, անխնայ կերպով ջարդելով հրէաները: Ըստ ժամանակակից պատմաբաններու, ոչ նուազ քան 300,000 հրէաներ մորթուեցան, 300 համայնքներ անհետացան եւ 400 ուրիշներ ալ աւերակներու վերածուեցան: Նիւթական թշուառութեան միացաւ ծայրայեղ բարոյաբեւոյժ մը, եւ բարբիներն իրենք իսկ չփութութեան մատնուած էին աշխարհի չարիքներու պատճառը ժողովուրդին բացատրելու համար:

Անկարելի էր խմբական դադթն, որովհետեւ ոչ մէկ երկիր ներս կ'առնէր զիրենք եւ անոնք ստիպուած էին կամ մկրտուիլ եւ կամ մեռնիլ...

Այդ ատեններն երեւան եկաւ Բալխէմ անունով սուրբ մը: Չորս տարեկան հառակէն որբացած, ան կը յաճախէր իր ժամանակուայ հրէական վարժարանը: Այդ տարիքին արդէն ան երազներ կը տեսնէր իբր թէ եւ կը յայտարարէր թէ Աստուած կը խօսի իրեն: Աւելի վերջերս ան անտառ քաշուեցաւ՝ աշխուղ առանձնութեան մէջ թաղմունի ու Քապալը ուսումնասիրելու:

Իր բարոյաւոր նոր կրօնքը մեղմութեան եւ ներողամտութեան վրայ կը յենուր, տեսակ մը կանտիական կրաւորական դիմադրութիւն քրիստոնեաներու հալածանքներուն: Անոր հետեւորդները կոչուեցան Հասիտիմներ (բարեպաշտ), որոնք կը դանազանութիւն միւս հրէաներէն աշտերուն վրայ կախուած երկայն ծամերէն եւ բարձրաձայն աղօթքներէն: Անոր յաջորդներէն կան մինչեւ այսօր չորս բարբիներ, որ գաղիկ կը կոչուին եւ ամէն տարի հազարաւոր ուխտաւորներ կ'ընդունին իբր Աստուծոյ հրաշագործ միջնորդները երկրի վրայ: Անոնք կ'ըսեն, թէ սինակոկներու մէջ աղօթքէն

վերջ կարելի է խմել, պարել եւ ուրախանալ, որովհետեւ արմութիւնն ու սխը անհաճոյ են Աստուծոյ: պէտք է ներողամիտ եւ զուարթ ըլլալ միշտ:

1848-ի Յեղափոխութիւնն իր ազդեցութիւնն ունեցաւ նաեւ Արեւելքի մէջ, եւ Ալեքսանդր Բ. Ռուսիոյ կայսրը թոյլատրեց հրէաներուն՝ որոշ մեծ քաղաքներու մէջ բնակութիւն հաստատել:

1882-ին Ալեքսանդր սպաննուեցաւ եւ քանի մը հրէայ ընկերվարականներ ձերբակալուեցան իբր դաւադիրներ: Ռուսիականութիւնն ամբողջ հրէայ ժողովուրդին վրայ հրաւիրեց ուռու մութիկի վրէժխնդրական վայրի բնազդը եւ ահա վերսկսան Շմիէյնիք Հէթմանի ժամանակուան փոկրածները: Հազարաւոր ընտանիքներ կործանուեցան եւ տասնեակ հազարներով խողիտղուեցան անպատիժ կերպով: Արատադադթն սկսաւ դէպի Ամերիկա, եւ ամբողջ արեւմտեան Եւրոպայի ժողովուրդները բողոքեցին — սղատոնական ձեւով ի հարկէ...

ՍԻՈՆԻԶՄ

Ահա այդ ժամանակներն էր որ ծնաւ քաղաքական ազատագրութեան դադափարը:

Մարդասէր հրէաներ խորհեցան, թէ կարելի չալտի ըլլայ հակահրէութիւնն արժատախիլ ընել մոլեռանդ քրիստոնեաներու մէջ եւ թէ անհրաժեշտ է միջոց մը գտնել հրէաներուն հայրենիք մը ապահովելու համար:

Մովսէս Հէս եղաւ այդ դադափարը թանձրացեալ ձեւով հրապարակ հանողը: Ան որդեգրեց Քարլ Մարքսի ընկերվարական դադափարները եւ յայտարարեց, թէ ի շահ մարդկութեան անհրաժեշտ է որ ինչպէս իւրաքանչիւր անհատ, այնպէս եւ իւրաքանչիւր ազգ ի վիճակի ըլլայ իր բնատուր ձիրքերն իրենց մաքսիմովին հասցնելու: Քանի որ հրէայ ցեղն այնչափ նպաստած է քաղաքակրթութեան դատին, պէտք է որ անոր կարելիութիւն տրուի այժմ ալ իր կարողութիւններն ի սպաս մարդկային յառաջդիմութեան ծառայեցնելու: Այս ձեւով՝ Հէսի ազգայնականութիւնը կը համա-